

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/2

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արա Վատույինի 26.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 1170/02 որոշման դեմ:

Ա/Ձ Արա Վատույինի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 14.10.2015 թ-ին կայացվել է թիվ 1170/02 որոշումը, որի համաձայն 14.10.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Արա Վատույինը (այսուհետ նաև գանգատաբեր) ունի 278.550 դրամ հարկային պարտավորություն:

Գանգատաբերը հայտնում է, որ 2006 թ-ին լուծարվել է: Բացի այդ, 2004 թ-ից չի իրականացրել որևէ գործունեություն և կիրառված արտոնությունների արդյունքում գանգատաբերի նկատմամբ հաշվարկված պարտավորությունները զրոյացվել են, որի վերաբերյալ հարկային տեսչության կողմից տրամադրվել է համապատասխան տեղեկանք:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արա Վատույինը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 1170/02 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Արա Վատույինի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 14.10.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 278.550 դրամ, այդ թվում՝ եկամտահարկի գծով 92.850 դրամ, սոցիալական ապահովության վճարի գծով 185.700 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 14.10.2015 թ-ին ընդունվել է թիվ 1170/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արա Վատույինից 278.550 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Արա Վատույինը 2006 թ-ի նոյեմբեր ամսին դադարեցրել է գործունեությունը (լուծարվել է): Այնուհետև 09.09.2015 թ-ին Արա Վատույինը վերագրանցել է որպես անհատ ձեռնակատեր և ստացել է նախկինում իրեն պատկանող հարկ վճարողի հաշվառման համարը: ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ում հաշվառման կանգնելուց հետո, համաձայն «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների, Ա/Ձ Արա Վատույինի մոտ առկա է եղել 278.550

դրամի չկատարված պարտավորության գումար, որն առաջացել է դեռևս մինչև 2006 թ-ն ընկած ժամանակահատվածում:

Ստանալով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 1170/02 որոշումը Ա/Ձ Արա Վատույինը այցելել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ՝ առաջացած պարտավորությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով: ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ում, ուսումնասիրելով Ա/Ձ Արա Վատույինի վերաբերյալ գործը և կիրառելով 2005 թ-ի նոյեմբերի 11-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, պարզվել է, որ 26.10.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Արա Վատույինի պարտավորությունները կազմում են ընդամենը 5045 դրամ:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Արա Վատույինի կողմից 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների նկատմամբ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները ժամանակին կիրառվելու դեպքում, այդ պարտավորությունները չէին արտացոլվի «Հարկատու 3» համակարգում, հետևապես նաև հիմք չէին հանդիսանա ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 1170/02 որոշումը կայացվելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 1170/02 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ